

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. ԳԱՐԻԲՅԱՆ

1. ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍԻՐ

Օրյեկտիվ աշխարհը գոյություն ունի մեր գիտակցությունից անկախ: Մեր գիտակցությունը օրյեկտիվ աշխարհի նյութի մի հատվածի՝ մարդկային ուղեղի հատկությունն է, որի միջոցով մենք ճանաչում ենք այդ աշխարհը: Գիտակցությունը դարձել է մարդու գոյության ամենահզոր միջոցը և գոյություն ունի բոլոր մարդկանց մեջ, բոլոր մարդկանց համար: Եվ քանի որ գիտակցությունը բոլոր մարդկանց ուղեղի հատկությունն է, ուստի անհատական լինելով, նա հասարակական, նաև համամարդկային է: Այդ գիտակցությունը իրական է, գործուն է, երբ նա դրսևորվում է: Նրա դրսևորման դանադան ձևեր կան, որոնցից ամենակատարյալը այժմ լեզուն է: Այսպիսով լեզուն ուրիշների և ինձ համար գոյություն ունեցող գործուն, դրսևորվող, իրական գիտակցություն է: Լեզվի մեջ կա այն, ինչ որ կա գիտակցության մեջ: Լեզվի և գիտակցության փոխհարաբերությունը բոլորին հայտնի անմարտություն է. լեզվի միջոցով զարգանում է գիտակցությունը, գիտակցության ազդեցությամբ կատարելագործվում է լեզուն: Սակայն լեզուն, իբրև գործուն գիտակցություն բոլոր մարդկանց համար ընդհանուր լինելով, նաև ստացել է տարբեր կերպարանքներ պատմական և արտադրական համակցությամբ միմյանց հետ կապված հասարակական մարդու հասարակական միավորումների մեջ: Այդ պատճառով էլ գոյություն ունի տոհմական լեզու, ցեղական լեզու, ժողովրդի լեզու, ազգային լեզու: Բոլոր ազգային լեզուները կամ ցեղական լեզուները խոսողության կամ գործուն գիտակցության ձև են՝ այդ չափով նրանք ընդհանուր են, իսկ քանի որ նրանք կազմավորված են յուրաքանչյուրը պատմական տարբեր հանգամանքներում ու միջավայրում, տարբեր ժամանակաշրջանում, ժամանակի տարբեր տեղությամբ՝ նրանք միմյանցից տարբեր են, միմյանց անհասկանալի: Բացի այս, շատերն առաջացել են միմյանցից անկախ կամ հետագայում հեռացել են միմյանցից և տարբեր պատմա-հասարակական հանգամանքներում զարգացել և գոյատևել: Այդ էլ պատճառ է, որ կան տարբեր և իրար անհասկանալի շատ լեզուներ: Բայց նրանց մեջ կա մի ընդհանուր բան, մշտական և անփոփոխ, դա մարդկային գիտակցությունն է:

Լեզուն դրսևորվում է հնչյուններով, բայց «հնչյուն» բառնումը լեզվի մեջ բոլորովին տարբեր բան է, քան ֆիզիկայի մեջ: Այդ պատճառով էլ հայերենը տարբերակում է այն, ինչ որ ուսերենում մի բառով է ասվում: Այսպես՝ ուսերեն ՅՅԿ բառը հայերեն թարգմանում ենք «ձայն», եթե ֆիզիկային է վերաբերում, և «հնչյուն»՝ եթե լեզվին

է վերաբերում: Ձայնը, որի մեջ մտցնում ենք և աղմուկը, անհաշիվ տեսակներ, տարբերակներ, չափեր ունի, և նրա տարբերակները կախված են օդի տատանումների քանակից, հաճախականությունից, լայնությունից, երկարությունից և այլն, և այլն: Դրանց տարբերակները ուսումնասիրում է ֆիզիկան և օդապորժում տեխնիկական այլ նպատակներով, մինչդեռ լեզվի հնչյունները, ֆիզիկական հնչյունների հետ համեմատած, սահմանափակ քանակություն են կազմում: Դրանք լեզվական (կարգերի) ամենափոքր միավորներն են, որ գիտակցված են հասարակությունների կողմից: Սակայն դրանք գոյություն ունեն և գիտակցված են միայն լեզվական կարգերի մեջ: Ծիշտ այնպես, ինչպես բառն էլ անկախ գոյություն չունի, այլ գիտակցված է խոսքի մեջ, բառաձևն էլ նույնպես գիտակցված է և կա խոսքի մեջ: Երբ առարկան գիտակցվում է, նա գիտակցվում է իր դոչով և, ուրեմն ներքին գիտակցության՝ նախադասության մեջ: Ուստի երբ մարդը գիտակցել է ծառ, փայտ, անտառ, նա գիտակցել է որպես «ծառ է», «փայտ է», «անտառ է»: Այսպիսով լեզուն անքակտելի ամբողջություն է հնչյունների, բառերի, բառաձևերի, նախադասությունների համակարգերի: Այս ամբողջությունը անդամահատում են լեզվաբանները, շերտավորում զանազան մակարդակների և ապա յուրաքանչյուր մակարդակի կազմության սխեմա՝ որոշում և ուսումնասիրում:

Իրոք, լեզվի մեջ չկան անկախ ր, ա, դ, այլ դրանք կան բան, բեր, բռնել, դնել, դառնել, դատել, գալ, գնալ, դառ և նման բառերի սկզբին և այլ բառերի այլ դեպքերում: Սակայն մենք վերացարկում ենք լեզվից նրա հնչյունական տարբերքը և նրան գիտում ինքն իր մեջ, միշտ ենթադրելով լոկայան, որ նա անպայման միտք՝ իմաստ արտահայտող լեզվի միավորի բաղադրիչ տարրն է: Եթե այս մոմենտը չլիներ, ո՞վ կգրադվեր ձայնի որևէ դրսևորումով, բացի ֆիզիկոսներից: Լեզուն հետադասողը լավ է հասկանում, որ «բ»-ն որպես այդպիսին չկա, այլ կա իրեն լեզվի տարր: Այլապես ինչո՞ւ պիտի զբաղվեր նա լեզվի հնչակարգով և ոչ կովի բառաչով կամ քարին դիպած երկաթի զրնգոցով: Լեզվաբանական ոչ ծայրահեղ ուղղություններն այժմ ընդունում են և բառի, և՛ նախադասության բովանդակության հաշվառման անհրաժեշտությունը հետադասությունների մեջ, թեև այս կամ այն ձևով աշխատում են շրջանցել այդ հարցերը: Այսպես էլ գոյություն չունեն սեղանի, սեղանից, սեղանով և նման ձևեր նախադասությունից դուրս, ուրեմն և լեզվից դուրս, այլ դրանք, եթե լեզվից դուրս են հանվում, առնվում են իրեն բարստրահում, միշտ նախադրելով նրանց համար բովանդակություն՝ նրանց նախադասության անգամ լինելը: Այդպես էլ նախադասության անդամները, այսինքն՝ շարահյուսության մակարդակի հատվածները, որոնք առանձին գոյություն չունեն, նրանք գոյություն ունեն միայն նախադասության մեջ:

Սակայն լեզվի նկատմամբ լինում է երկու մոտեցում. մեկը հետադասողի, որը գիտե լեզուն ու բովանդակությունը, և վերցնելով նրա այս կամ այն հատվածները և արստրահվելով նրանց բովանդակությունից, ուսումնասիրում է այդ հատվածներն ու ձևերը իրենք իրենց մեջ: Սակայն եզրակացությունները ստույգելու համար նորից դիմում է լեզվին և օդապորժում ամբողջ կոնտեքստը: Լեզվի նկատմամբ մյուս մոտեցումն էլ այն է, երբ լեզուն սովորում են. այդ դեպքում նախ գիտում են լեզվական երևույթները, ապա բովանդակության միջոցով բմբռնում դրանք: Լեզվական երևույթները առանց բովանդակության սո-

վորելը սխալաստիկա է, ոչ մեկին ոչ մի օգուտ չի տա: Ուստի այլ է գիտնականի մոտեցումը, այլ ուսուցչի մոտեցումը: Գիտնականը փորձում է երևույթը բացատրել և բացատրել, իսկ ուսուցիչը՝ բացատրվածը, չիմանվորվածը, սխալմամբ սովորեցնել, բայց երկուսի համար էլ բովանդակություն հաշվի առնելը պարտադիր է: Մեկը ձևից է գնում դեպի բովանդակությունը, մյուսը՝ բովանդակությունից դեպի ձև: Գիտնականներ կան, որոնք նրկրորդական տեղ են տալիս բովանդակությանը կամ միայն լուելյայն են ընդունում դա, որովհետև իրականում լեզվի ձևն ու բովանդակությունը անբաղաժեղ են միմյանցից և միայն այդպես հասկանալի, եթե ուսուցիչը փորձի գիտնականի նման բովանդակությունից կտրված և արստրահված կարգեր ուսուցանել, նա ոչինչ սովորեցնել չի կարող: Եթե չկա բովանդակության վերլուծություն և անբաղաժեղ կապ ձևի հետ, եթե բովանդակությունից չեն գնում դեպի ձևը, այդ ուսուցումը ոչ մի արժեք չունի լեզուն յուրացնելու համար: Այդ պատճառով տարբեր կարող է լինել գիտնականի լեզվաբանությունը և տարբեր ուսուցչի լեզվաբանությունը: Գիտնականի լեզվաբանությունը լեզվի այն տեսությունն է, որ եա կառուցում է իրեն հայտնի նյութերից արստրահելով, որոնելով և հետազոտելով՝ սահմանելով ընդհանուր օրինաչափություններ, որոնք արդարացին իր գիտցած լեզվի կառուցվածքը, այդ կառուցվածքի և նրա հատվածների ծագումն ու դարգացումը, գոյություն ունելող ներքին համակարգերը և այլն: Ուսուցչի լեզվաբանությունը լեզվի այն տեսությունն է, որով նա հասկանում և հասկացնում է հայտնաբերած օրինաչափությունները, գիտակցում և գիտակցել է տալիս հայտնի դարձած լեզվական կարգերը, ճանաչում և ճանաչել է տալիս լեզվի սահմանված և հաստատուն օրենքները: Ահա ինչու գոյություն ունեն ընդհանուր լեզվաբանություն և մանկավարժական լեզվաբանություն: Մանկավարժական լեզվաբանության օբյեկտը լեզվի գործող քերականությունն է, նրա հաստատապես սահմանված համակարգերը:

Քերականությունը լեզվի օրենքների կաղապարված՝ սխալում է, նոր ձևով ասած՝ տարբեր մակարդակի համակարգի ամբողջություն: Այդ տարբեր մակարդակի սխալմաների համար ստեղծվում են կաղապարներ. ուսումնասիրելով հնչյունական օրինաչափությունները՝ ստեղծում են տվյալ լեզվի հնչույթային կաղապարներ, ուսումնասիրելով ձևաբանությունը, իհարկե, խոսքի մեջ, կատարում են վերացարկում և ստեղծում ձևաբանական կաղապարներ, որի մեջ մտնում է նաև հարացուցություն, նույն խոսքի մեջ ուսումնասիրում են շարահյուսությունը և ստեղծում շարահյուսական կաղապարներ: Այսպիսով քերականությունը պարզապես լեզվական տարբեր մակարդակների կաղապարների համակարգերի ամբողջություն է: Այդ կաղապարները պատկանում են լեզվի բնագավառին: Դրանք այն հաստատուն միավորներն են, որոնք հիմք են դառնում անհատական լեզվական ստեղծագործության՝ խոսք կառուցելու հմտության համար: Հասկանալի է, որ խոսքը անհատական ստեղծագործություն է, մտածողության մշտական և հարափոփոխ դրսևորման միջոց:

1 Լեզվի մեջ իմանենտորեն գոյություն ունեցող կանոնները կոչում ենք լեզվական օրինաչափություններ. իսկ դրանց գիտական ձևավորումները՝ լեզվական կամ քերականական կաղապարներ:

Մտածողությունը մարդկային գիտակցություն է իր կիրառման պրոցեսում: Արդ՝ գիտակցությունը է նրա զրսևորումը՝ լեզուն, ընդհանուր մարդկային հատկություն են, իսկ մտածողությունը այդ հատկության անհատական կիրառությունն է, որի զրսևորումը խոսքն է: Ահա ինչու լեզուն հաստատուն և ընդհանուր է, համամարդկային, ցեղակա՞ն, ազգային, իսկ խոսքը անհատական է, ստեղծագործական, հարափոփոխ ու բազմերանգ:

Գիտակցությունը պայմանավորում է լեզվի կայուն օրենքները, լեզվական կաղապարների համակարգը, քերականությունը, իսկ մտածողությունը պայմանավորում է լեզվի օրենքների ստեղծագործական կիրառությունները, որով ստեղծվում է ամեն մի առանձին անհատի խոսքը, որ միշտ յուրահատուկ է, միշտ տարբեր, միշտ բազմերանգ: Անհատի խոսքի բերականական օրենքները հաստատուն ու անփոփոխ են, սակայն նրանց կիրառությունը միշտ փոփոխական է նույնիսկ մի անհատի խոսքի մեջ՝ մոմենտից մոմենտ, վայրկյանից վայրկյան, պահից պահ, օրից օր, տարուց տարի և այլն:

Արդ՝ լեզվի կաղապարները ներկայացնում են լեզվի համակարգի ստատիկ՝ կայուն բմբնումներ, մինչդեռ խոսքի կարգերի կաղապարները լեզվի համար կազմում են դինամիկ բմբնումներ: Այդ պատճառով էլ կարելի է ստեղծել մեքենաներ, որոնք կիրառեն լեզվի կաղապարները կամ լեզվի կաղապարներով խոսողության պահանջները բավարարեն, սակայն, թվում է, թէ անհնար է ստեղծել մեքենա, որը կարողանա խոսքին տիրապետել այնպես, ինչպես մարդն է տիրապետում:

Ինչպես ասացինք, լեզուն հասարակության բոլոր անդամների համար գործուն գիտակցություն է, որ զրսևորվում է հնչյուններով և քերականական օրենսդրություններով, սակայն, ինչպես ասացինք, լեզվի օրինաչափությունների և հնարավորությունների կիրառումը դինամիկ է, ստատիկ չէ, հարափոփոխ է, կայուն չէ, բազմազան է, միօրինակ չէ և ստեղծագործական է, քարայրած չէ: Յուրաքանչյուր մարդ խոսելիս անհատական ստեղծագործություն է կատարում և թեև լեզվի ընդհանուր օրենքներն է կիրառում, բայց դա նա կատարում է էպես ստեղծագործորեն. իր յուրաքանչյուր միտքը իր խոսքով, յուրովի՝ իրեն հատուկ կարողություններով, երանգներով և առանձնահատկություններով է զրսևորում: Ահա ինչու կարելի է ասել խոսքի անհատական է, իսկ լեզուն՝ ընդհանուր: Հետևաբար, հակառակ երիտերականների պնդումների, գոյություն ունեն ազգային լեզու, բարբառներ, բայց չկա անհատական լեզու կամ բարբառ, այլ կա «անհատական խոսք, ոճ»: Եվ որովհետև դրանք լեզվով են արտահայտվում, լեզվի անհատական կիրառությունների արդյունք են, ուստի նրանք, ովքեր չեն տարբերում լեզուն և խոսքը, ինչպես երիտերականներն էին, ընդունում են, որ «կան միայն անհատական լեզուներ»: Այսպիսով՝ լեզուն այն է, ինչ որ ընդհանուր է, պարտադիր, անխախտելի բոլորի համար, այն, որի կառուցվածքը արտացոլվում է բերականության մեջ, իսկ խոսքն այն է, ինչ որ ստացվում է ամեն մի անհատի կողմից այդ լեզվի, այդ գործուն գիտակցության ամենօրյա կիրառմամբ: Լեզուն նշանների սիստեմ է, միշտ է, բայց ամենակատարյալ սիստեմ, որովհետև այդ սիստեմը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կողմի իր խոսքն ստեղծագործելու՝ վերափոխելու, վերադասավորելու, նրա մեջ զանազան կոմբինացիաներ ստեղծելու՝ նախած մտավոր պրոցեսի բազմամիլիոն երանգավորումներին, մինչդեռ այլ տիպի նշանները

ամփոփված են որոշ անփոփոխ սահմաններում՝ նրանք չեն կարող հավասարվել լեզվին, նրանց «լեզուն» ու «խոսքը» իրար ծածկում են, հավասար են: Բայց մարդկային լեզուն և խոսքը իրար հավասար չեն, որովհետև, կրկենք մի անգամ էլ, լեզուն կաջուն օրինաչափությունների համակարգ է, իսկ խոսքը այդ համակարգերի ստեղծագործական կիրառություն է՝ անհամար հնարավորություններով: Էլ չեմ խոսում այն մասին, որ լեզուն ունի պրոսոդիկա՝ առողջ նույնի համակարգը, որից զուրկ են նշանների այլ ձևեր: Պրոսոդիկան խոսքի հնարավորությունները, որոնք մաթեմատիկորեն անսահման են, կրկնապատկում է, եռապատկում է, բազմապատկում է: Եթե խոսքի հնարավորությունները նշանակենք մաթեմատիկայի անսահմանության նշանով և պրոսոդիկան իբրև, ապա խոսքի հնարավորությունները հավասար կլինեն իբրև անսահմանության: Վերջենք մի օրինակ. Սամվելը զարգացրեց զիտուքյունը: Կարող ենք կազմել անսահման քանակությամբ այսպիսի նախադասություններ, բայց նույն քանակությամբ էլ կարող ենք նույն նախադասությունները կազմել հարցականով, բացականչականով, հրամայականով և այլն, և այլն: Այդ ամբողջ կազմի վրա ավելացրեք նաև ժխտական կազմությունները: Ի՞նչ հսկայական քանակություն կստացվի: Բայց դա բոլորը չէ: Եթե հեղինական երանգով ասենք. Սամվելը զարգացրեց զիտուքյունը, որը նշանակի, թե բոլորովին չզարգացրեց, մեր ունեցած նախադասությունների անսահման թիվը կկրկնապատկվի:

Այսքան ծավալուն և անսահման է խոսքը, մինչդեռ լեզվի կանոնները սահմանափակ են, որովհետև միայն կաջուն օրինաչափություններ են, պայմանականորեն հաստատուն և անփոփոխ, բայց կիրառությամբ անսահմանափակ հնարավորություններով: Սակայն ի՞նչն է դարձնում այդ կաջուն միավորներն իրավամբ անսահմանափակ. — Բերականակա՞ն փոխաբերությունը. մի գոյական կարելի է փոխաբերաբար գործածել իբրև ածական (քար սիրտ), մի ածական և այլ խոսքի մաս՝ իբրև գոյական (իմաստունը հիմարին դաս տալու պետք չունի), մի ամբողջ նախադասություն մի գոյականի փոխարեն («Կորչի անգրագիտությունը» ընկերությունը հրավիրեց նիստ), մի գոյական ձև իբրև մակրայ (ձրինակ՝ ուրախությամբ ընդունա՞ցել): Այդ պատճառով մի հոլովածն կարող է տասնյակ իմաստներ ու պաշտոններ արտահայտել, մի բառ կարող է բազմաթիվ առումներով և պաշտոններով գործածվել, մի ձև կարող է բազմաթիվ այլ ձևերի փոխարինել: Այդ ամենը չեն կազմում քերականության էական մասը, դրանք խոսքի տարրեր են: Քերականությանն են վերաբերում ձևերի, իմաստների և նշանակությունների հիմնական էական միավորները, որոնցով և զբաղվում է մանկավարժական լեզվաբանությունը:

Այսպիսով, պետք է տարբերել լեզու և խոսք՝ գաղափարները և խոսքի կիրառումները շփոթել քերականության կարգերի հետ, պետք է տարբերել նաև ընդհանուր լեզվաբանություն և մանկավարժական լեզվաբանություն, մեկի բնագավառը շփոթել մյուսի հետ:

2. ՀԱՅԵՐԵՆԻ ՍԵՌԱԿԱՆ ՈՒ ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԸ

Լեզվի և խոսքի հարցերը քերականության բնագավառում ավելի հասկանալի դարձնելու համար կիրառենք մեր վերոհիշյալ այն սկզբունքը, ըստ որի զիտությունը, այդ թվում և քերականությունը, այլ բան է, երբ մոտենում ես

չգիտցողի տեսակետից և այլ բան, երբ մոտենում ես գիտցողի տեսակետից: Ո՞ր բան է, երբ մեկը հանդուժում է քերականությունը՝ այն սովորեցնելու նպատակով, մի այլ բան է, երբ մեկը, ելնելով քերականությունից, կիրառում է այն ուսումնասիրությունների մեջ: Ուրեմն գիտնականը կարող է ունենալ 2 մոտեցում. 1) չգիտցողի շահերով առաջնորդվող մոտեցում, և 2) գիտցողի և իր շահերից բխող մոտեցում: Սանկտավարժական լեզվաբանության մոտեցումը առաջինն է:

Քերականությունը սովորեցնելու համար պետք է այդ գիտության մեջ լինեն կայուն նորմաներ իրենց գլխավոր նշանակություններով, առանց երկրորդական նրբերանգումների, որպեսզի քերականական բմբռնումները հաստատուն դառնան և կարողանան հիմք դառնալ լեզվական հետագա ստեղծագործական օպերացիաների, խոսքի ստեղծագործական կառուցման². Եթե քերականություն սովորողներին տանք մի սրական հոլով մի քանի հոլովների նշանակություններով, ավելի ևս բոլոր տասնյակ նրբերանգներով, մեր սովորողը կխեղդվի այդ տարափի տակ և պարզապես ոչինչ չի սովորի: Սակայն երբ տրական տանք նրա մի կայուն նշանակությամբ, ապա գա ոչ միայն կյուրացվի, այլև կովան կդառնա այդ կայուն հասկացությունը օգտագործելու և քերականական փոխաբերության միջոցով սովորելու նաև նրա նրբերանգները: Այսպես և մյուս հոլովները: Հոլովի բանաձևը, ինչպիսի գրսևորում էլ նա ունենա, մեկ կայուն նշանակության հետ կապելը լեզվական կաղապարում է, իսկ շատ նշանակությունների կամ նրբերանգների հետ կապելը խոսքային ստեղծագործական կիրառում է. դրանք միմյանց շփոթելը շփոթմունքի մեջ կզցի ոչ միայն նոր սովորողին, այլև գիտնականին և իրեն՝ շփոթեցնողին:

Հենց այդպես են վարվել առաջին քերականագետները, որոնք քերականություն չեն իմացել, բայց քերականություն ստեղծել են և լավ են ստեղծել: Փորձենք հասկանալ նրանց: Նրանց նպատակն է եղել բմբռնելու լեզվի օրինաչափությունները և կազմելու այդ օրինաչափությունների կաղապարներն ու նրանց համակարգը, որպեսզի կարելի լինի ճանաչել լեզուն: Նրանք սկսել են դիտել, ուսումնասիրել, հետազոտել, գտնել օրինաչափությունները և կաղապարել դրանք: Տեսնենք, թե ինչպիսի ճանապարհով:

Աստիճական լեզվի մեջ կան, ընդունենք, 25 ձևեր (մենք չենք վերցնում բոլոր շեղումները, այլ առնում ենք 5 հոլովման կանոնավոր ձևերը): Այդտեղ կլինեն հետևյալ բառաձևերը (նկատի ենք առնում միայն կղակին). mensa, mensae, mensae, mensam, mensa, servus, servi, servo, servum, servo, civis, civis, civi, civem, cive, cornu, cornus, cornu, cornu, cornu, res, rei, rei, rem, re.

Եթե ձևով առաջնորդվեն, նրանք պիտի ստեղծեն 25 հոլով, բայց նրանք այլ կերպ են վարվել:

Այս բոլոր ձևերը վերցրել են նախադասությունների մեջ և պարզել, որ դրանցից հինգը՝ mensa, servus, civis, cornu, res ուղիղ ձևեր են և անվանում են առարկան, դառնալով ենթակա, ուստի կոչել են անվանական Nominativus. Հայերս «անվանական» բառի փոխարեն գործածում ենք ուղղական, որովհետև

² Քերականական կարգի գլխավոր նշանակությունը յուրացնել տալուց հետո կարելի է տալ փոխաբերականի մի երկու օրինակ ևս, խոսքի ստեղծագործական հմտություն մշակելու համար:

մեր բառը ուղղակիանում գրո ձևով՝ ունի կրոմ ձևով չունի, ուղիղ ձևով է: Լատինները մեծ ոխակ անելով կարող էին այդպես կոչել, որովհետև նրանց ուղղական բառը ձևովոր է և հետո՝ ձևովի մեջ երևում է ոչ միայն նրա զոյական լինելը, այլև սեռը, թիվը, հոլովումը: Շարունակենք:

Քննելով մյուս 20 բառաձևերը նախադասությունների մեջ, պարզել են, որ mensae, servi, civis, cornus, rei ձևերը ցույց են տալիս առարկայական հասկացություն և դա կադապարել են իբրև հատկացական հոլով, բայց կոչել են Genitivus (սեռական), որովհետև ուղղակիանի հակադրությամբ այդ բառաձևերը որոշ լեզուներում հատկացության հետ միասին ցույց են տալիս նաև զոյականի սեռը: Շարունակելով գործը նույն եղանակով, այսինքն՝ կննելով նախադասության իմաստից, մնացած 15 բառաձևերից առանձնացրել են այն 5 բառաձևերը, որոնք նշանակությամբ նույնն են և ցույց են տալիս հոնգման առարկա ու կադապարել նոր հոլով, անվանելով այն Dativus, որ հայերեն բառացի նշանակում է տրական: Մնացած 10 բառաձևի իմաստը քննելով, նույնպես նախադասության մեջ, պարզել են, որ դրանցից 5-ը ցույց են տալիս կրող առարկան, որ հակադրվում է ներգործողին: Դա էլ կադապարել են որպես հայցական հոլով, անվանելով այն Accusativus, որ նշանակում է մեղադրվող, այսինքն՝ կրող, որ հայերեն կոչել են հայցական (ռուսերեն винительный):

Քերականություն ստեղծողները այդպես են մոտեցել քերականությանը և իմաստի ու ձևի միասնությամբ կադապարել հոլովները, կննելով միշտ իմաստից: Հայ քերականները թարգմանաբար պահպանել են սեռական անունը, վերագրելով նրան հատկացական նշանակություն: Շարունակելով իրենց գործը, քերականագետները հայտնաբերել և կադապարել են լատինների բոլոր հոլովները:

Այսպիսով, բոլոր հոլովների անոմներով արտացոլել են նրանք այն նշանակությունները, որ գիտակցել են քերականության այս կարգերը կադապարելիս: Այնուհետև հոլովները հետադադում և բոլոր լեզուների քերականությունների մեջ այդպես անվանվել ու շարունակում են անվանվել ու նշանակել, ինչպես որ նրանք հայտնաբերվել են ու կադապարվել հնադարյան քերականագետների կողմից: Լեզվաբանական գիտությունը ոչ այդ եզրակացությունները, ոչ էլ այդ անունները մինչև հիմա չի հերքել, ուստի դրանք միշտ օգտագործվում են և՛ իբրև ուսուցման միջոց, և՛ իբրև աշխատանքային հետազոտական միջոց:

Բայց մեր քերականագետ իմաստունները, մտնելով արժական լեզվաբանությունն ստեղծող գիտնականները, մարդկությանը մեծ ծառայություն մատուցողները, որոնք երբեք չեն զբաղվել ունայն բաներով, ունեցել են մի իմաստություն ևս. կարողացել են տրտրահավել ամբողջ լեզվից և, կադապարումը կասարելիս, առաջնորդվել միայն մեկ կայուն սկզբունքով, հաստատուն սկզբունքով, այսինքն՝ հովովական կադապարներն ստեղծել են բառաձևերի այն նշանակությունների համար, որոնք ցույց են տալիս նիմնականում առարկայական հարաբերություն տարածության մեջ, իսկ եթե ժամանակի բառեր են, առնվում են իբրև տարածության փոխաբերություններ: Միայն ներգոյական հոլովը կադապարվել է «ներ գոյականի» իմաստով, որովհետև այստեղ առարկան առնվում է իբրև մեկ այլ առարկա պարունակողի հակացությամբ: Այստեղ էլ տերմինը ստեղծված է իր մի հիմնական իմաստի առումով:

Բայց խոսքի մեջ առարկաների անունները կարող են օգտագործվել իբրև նպատակ, տեղ և այլ բմբոնումներ յույց տվող միջոցներ կամ իրականություններ: Հոլովական կաղապարման նպատակով այդ հանգամանքը հաշվի չեն ուղեցել առնել, որովհետև այդ դեպքում առարկաների անունները ոչ թե իրենց արտահայտիչները կլինեին, այլ կդառնային հատկանիշի արտահայտիչներ (սիրով, ուրախությամբ, հեղինակությամբ և այլն):

Ինչպես ասացինք, բերականական կառուցվածքներն ունեն փոխաբերարար առնվելու հատկություն, որը և հնարավոր է դարձնում բերականությունը տիրապետողի համար խոսք ստեղծել: Իսկ դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ լեզուն (բերականությունը) իմացողը հասարակության մեջ մտքեր է հղանում և կարիք է զգում այդ մտքերը հաղորդելու, որ, ինչպես ասացինք, լեզվական կարողությունների ստեղծագործական արտահայտության կամ կիրառության հետևանք է: Այդ բերականությունը և բերականական կաղապարները ոչ թե լեզվական ստեղծագործության վերջավանսներն են, ինչպես սխոլաստիկներն էին կարծում, այլ լեզվական ստեղծագործության մեկնակետեր: Յուրաքանչյուր նոր մարդ, որ սովորում է բերականությունը, գտնվում է առաջին բերականների վիճակում, միայն մի տարբերությամբ, որ վերջիններս և նրանցից հետո եկած բերականները ճշտելով և կատարելագործելով բերականական կաղապարների համակարգը, թողել են մեզ միանգամայն մշակված վիճակում, իսկ դրա շնորհիվ միջնակարգ դպրոցի սովորողները 4—5 տարում անցնում են այն ուղին, ինչ որ բերականներն անցել են հարյուրավոր տարիների ընթացքում:

Ուստի ինչ մեթոդով որ բերականություն ստեղծողները գիտակցել ու կաղապարել են լեզուն, նույն մեթոդով էլ պետք է սովորել կամ սովորեցնել: Եթե այդ մեթոդի մեջ խախտում է մտցվում, ստեղծվում է անհաղթահարելի դժվարություն կաղապարների յուրացման հարցում, և սովորած բերականությունը չի ծառայում իր նպատակներին: Այդպես է մանկավարժական լեզվաբանության մոտեցումը: Նրա մոտեցմամբ հնդեվրոպական բոլոր լեզուները, որպես ազգակից լեզուներ, կարող են ուսումնասիրվել միևնույն կաղապարմամբ, եթե նրանք ձևաբանական լեզուներ են: Սակայն կաղապարման պրոցեսում պետք է նկատի ունենալ իսկություններ մեծած օրինաչափությունները և ամեն անգամ համակարգի մեջ փոփոխություն մտցնելիս առաջնորդվել բերականությունը նոր սովորողների և ոչ թե բերականությունը տիրապետողների մոտեցման սկզբունքներով:

Դա չի նշանակում, որ բերականագետը իրավունք չունի հետազոտություններ կատարել և իր ամեն տեսակի խորհրդածությունները շարադրել: Բայց դրանք միշտ էլ մնում են այլ գիտության՝ ընդհանուր լեզվաբանության յուրատում և ոչ մի տեղ, ոչ մի դեպքում անմիջապես չեն թափանցում դպրոցի բերականության ներսը: Դրանք չեն վերաբերում մանկավարժական լեզվաբանությանը: Եթե որևէ բան ընդհանուր լեզվաբանությունից թափանցում է դպրոցական բերականության մեջ, այդ, իհարկե, կատարում է մանկավարժական լեզվաբանությունը և միայն այն դեպքում, երբ հանգամանորեն դա քննվում է գիտության մեջ, ստուգվում կյանքում, ընդունվում հանրությանը կողմից, որպես չլիտցողիկ սովորեցնելու հարմարագույն կաղապար, և նոր միայն զետեղվում բերականության մեջ:

Սակայն մենք խոսեցինք քերականության ստեղծման և կաղապարման մասին ընդհանրապես, պարզենք, թե ինչպես են կատարվել քերականական կաղապարումները մեր՝ հայոց լեզվի համար:

Հա՛, մանկավարժական լեզվաբանությունը հիմնադրեցին մեր առաջին քերականները: Ե՛րբ մեր այդ առաջին գիտնականները (նկատի ունեմ ամբողջ միջնադարը) կազմում էին մեր լեզվի քերականությունը, այսինքն՝ կաղապարում էին մեր լեզուն, կամ ձևավորում էին մեր լեզվի կաղապարային սիստեմը, նրանք իրենց ձեռքի տակ ունեին հունական և լատինական լեզուների քերականությունները: Դա արդեն մեծ օգնություն էր հետազոտողների համար, ուստի նրանց էլ մնում էր պատճենավորել եղածը: Սակայն այդ պատճենավորումը մեխանիկական գործ չէր, այստեղ ևս նրանք գործ ունեին անծանոթ մի անդաստանի հետ, ուրեմն նրանց մոտեցումը պետք է լիներ վերևում նշված առաջին մոտեցման նման: Նրանք քերականությանը մոտենում էին իբրև շփոթողների, թեև իրենց գլխում ունեին օտար լիզվի քերականությունների կաղապարները: Որպեսզի ստուգեն, թե օտար լեզվի ո՞ր կաղապարները կան հայոց լեզվում, նրանք հետազոտում էին հայոց լեզվի տեքստը: Ընդունենք, թե նրանք գտել էին հայոց լեզվի 36 ձևեր (հինգ հոլովում): Պետք է պարզեն, թե այդ ձևերից որոնք են համապատասխանում իրենց հայտնի կաղապարներին: Բնական է, նրանք պետք է վերջնական այդ բառաձևերը կապակցությունների մեջ, այսինքն՝ իմաստով պարզեն այդ բառաձևերի խմբավորումները ըստ իրենց ծանոթ հունական կամ լատինական մոդելներին:

Վերցնելով, օրինակ, ուղի Տիտանայ, դուռն տանն, հրաման կայսեր, դաշտ պատերազմի, ավի գետոյ, լալնուրին ծովու կապակցությունները, իմաստներից պարզել են, որ Տիտանայ, տանն, կայսեր, պատերազմի, գետոյ, ծովու բառաձևերը ցույց են տալիս ստացականություն, իսկ նրանց հայտնի էր, որ ստացական հոլովը կրում է սեռական (Genitivus) տնունը, ուստի այդ ամենը, շնայած ձևերի այլազանության, կաղապարեցին որպես մեկ հոլով՝ սեռական³ հոլով: Այսպես վարվեցին նաև ուրիշ զեպերում և ստացվեց զբաբար լեզվի հոլովական հարացույցը:

Օտար լեզվի կաղապարային սիստեմը անպայման ազդեց մեր հեղինակների և հատկապես հոնարան ու լատինարան զպրոցի ներկայացուցիչների վրա, որոնք մի շարք ավելորդ կաղապարներ էլ ստեղծեցին:

Նրանք չուրահատուկ մոտեցում ունեին օտար և հայ լեզվական երևույթների համեմատության հարցում, միշտ օրինակելի համարելով օտարը, սակայն զնալով այդ ավելորդաբանությունները զեն նետվեցին: Բայց և, վերջապես, Այտրեյանը, Չալրիսյանը և նրանցից ավելի առաջ՝ Արսեն Բաղրատունին, քերականության մեջ սահմանեցին մեր հոլովների միշտ հարացույց պատկերը:

Աշխատեցա՛ր քերականությունը ստեղծելիս հեղինակների հետազոտությանը նպաստում էր զբաբարի կաղապարային համակարգի կամ քերականության օրակայությունը: Ընդունում էր գտնել այն բառաձևերը, որոնք համապատասխանում էին զբաբարում ունեցած կաղապարներին: Այդպես, լեզվի մեջ գիտելով գետ, գետի, գետով, գիւնու, գիւնով, մկան, հուր, հուրից, կնոջ և նման բառաձև-

³ Սեռական նշն., բայց մեր լեզվում նրա սեռացույց ֆունկցիան բացակայում է, ուստի այդ իմաստի տակ հասկացվել է միշտ հատկացականություն:

վերը, հետադուրսով բերականները պարզեցին, որ դրանք կազմում են շուրջ հիսուն հատ: Սրանցից հոլովներ կաղապարելու համար, շենք կասկածում, որ դրանք բոլորը սուել են կապակցությունների կամ նախադասությունների մեջ, այսինքն՝ իմաստավորել են: Եվ ահա՝ գետի ափ, գինու կարաս, մկան բույն, սուր որդի, օրվա նորություն, կնոջ զգեստ և նման կապակցությունների մեջ գետի, գինու, մկան, հոր, օրվա, կնոջ բառաձևերում տեսել են միևնույն իմաստը՝ նշանակությունը և կաղապարել որպես աշխարհաբարի սևուական հոլով: Եթե իմաստը չլինի, կամ իմաստով չառաջնորդվենք, կաղապարումը չէր ստացվի: Ինչո՞ւ կաղապարեցին որպես սևուական հոլով և ոչ այլ բան: Նախ ավանդականորեն առարկայական հատկացություն արտահայտող ձևը կաղապարել են միշտ իբրև սեռական, այստեղ ձևի և բովանդակության միասնություն է դրսևորվում, որը միջանկյալ կերպով արտացոլում է օբյեկտիվ ռեալականությունը. աշխարհը չի է անհաշիվ քանակությամբ առարկայական ստացականության կամ իրային պատկանելության հարաբերություններով, որովհետև դա հենց իրի հատկանիշ է. օրինակ՝ աստղի լույս, լուսնի լույս, տան կտուր, երկնքի աստղ, սելանի ոտ, այգու պարիսպ և այլն, և այլն: Ուրեմն կաղապարը համապատասխանում է իրականությանը՝ գիտակցության միջոցով: Առարկայի ստացական հատկանիշը շատ կարևոր, անհաշիվ օրինակներ ռեալորդ հատկանիշ է և նրա առանձին գիտակցումը ճանաչողության համար շատ կարևոր հանգամանք է:

Նախադասության մեջ առնվել են գետի և գետին, գինու և գինուն, մկան և մկանը, կնոջ և կնոջը, օրվա և օրվան, հոր, հորը և նման ձևերը պարզելու համար, թե պե՞տք է առանձին կաղապարել դրանք, թե միացնել նախորդին: Նախադասությունների մեջ պարզվում է, որ իրային հարաբերությունները դրսևորելու գեպրում դրանք ցույց են տալիս առարկայի հանգում: Այսպես՝ Արտաշը մոտեցավ գետին (գետի), այգուն (այգու), հորը (հոր), կնոջը (կնոջ) և այլն: Այս գիտակցումից ու ստուգումից կաղապարվում է մի նոր հոլով և, ըստ ավանդույթի, կոչվում տրական, որովհետև անվանումն էլ համապատասխանում է օբյեկտիվ ռեալականության մեջ գոյություն ունեցող իրային հարաբերությունների՝ հանգման առարկայի ճշմարիտ իրողությանը: Իրականության մեջ էլ առարկայական այս հանգման հարաբերությունը հակադիր է առարկայական ստացական հարաբերության, ուստի շփոթել այդ ըմբռնումները, լեզուն սովորողի համար վնասակար է: Փաստն այն է, որ այդ երկու հիմնական ըմբռնումների տարբերակման համար ինչ-որ մի նշան հայերենն ունի, դա տրականի «ն» հոգն է: Ուրեմն՝ սեռականի հետ տրականը դրսևորման նույնություն չունի: Մենք որ պնդում ենք առարկայական ստացականության և առարկայական հանգման իրական վիճակի և դրանց արտացոլման տարբերակման խիստ անհրաժեշտության և խիստ կարևորության վրա, չենք կարող այդ «որևէ» տարբերակիչ նշանը շրջապատել որպես նոր կաղապարի ստեղծման հիմք: Լեզվական երևույթները նույնական չեն, եթե նրանք ունեն գեթ նվազագույն տարբերիչ հատկանիշ: Եվ, ընդհանրապես, լեզվական երևույթները տարբեր են, եթե նրանք ունեն գեթ մեկ տարբերիչ հատկանիշ, թող թե այդ հատկանիշը լինի թույլ դիրքով, դա էլ բան է: Բայց հոգ ստանալը և շատանալը թույլ դիրք չէ և ինքը հոգն էլ ոչ միայն ինչ որ մի շնչին նշան է, այլ մի մեծ գաղափար, աշխարհըմբռնման մի մեծ կարգ, այն է՝ առարկայի առնված կոնկրետությամբ

ալն ժամանակ, երբ գոյակա՛նք մենք առնում ենք սրալեւ առարկայի անուն վերացարկված ձևով, հետևաբար հոգն րնդունելն ու շրնդունելը իսկությամբ շատ ուժեղ տարբերիչ հատկանիշ է: «Իկտի» հատկացակա՛նք և «գեկտի» տրական իմաստները տարբերվում են միմյանցից նշանակությամբ և նրանց մի կադապարի մեջ գետեղելը դժարություններ կատեղծեր լեզվին տիրապետելու և դրանց միջոցով օրյեկտիվ իրականության երևույթները տարբերակելու և ճանաչելու հարցում: Բարեբախտաբար հոգ առնելն ու շառնելը օպոդիցիայի մի հաստատուն միավոր կարող է լինել, այսինքն՝ տվյալ դեպքում հակադրությունը կարող է արտահայտվել կա և չկա դույզով: Այդ դեպքում «կա» — առանձին երևույթի ուսույլ գոյության վկայությունն է, իսկ «չկա» — նրա հակադրությունը, այսինքն՝ այդ երևույթի բացակայության վկայություն: Հակադրությունները ոչ միայն հակադրվում են իրար, այլև փոխադարձաբար հաստատում հակադրվողների ինքնությունը գոյությունը: Այսպես է սեռականի և տրականի հարցը:

Վերևում բերված մնացած բառաձևերից առնվել են բոլոր ուղիղ ձևերը և ստուգվել նախադասության մեջ. օրինակ՝

Մադիկը սիրում է արև:

Մադիկը սիրում է ուսուցչին:

Այս նախադասությունների փոխարեն

Կարապետը սիրում է արև:

Կարապետը սիրում է ուսուցչին:

Այս շրջապատում Կարապետը միշտ էլ անփոփոխ է, նրա նշանակությունը ներգործող գործող անձ լինելն է, և նա իր ձևը երբեք չի փոխում: Դա կադապարել ենք որպես ուղղական: Կարապետը սիրում է արև նախադասության մեջ արևը առարկայական հարաբերության ոլորտում ոչ թե գործողն է, այլ կրողը, իսկ ներգործողն ու կրողը հակադրություններ են, անհաշտելի հակադրություններ, թեև այստեղ ձևով նման են: Եթե այդ հակադրությունները, որ բնության մեջ կան (և անհաշտիվ բանակությամբ կան), քերականները նույնացնելին, կխախտել՝ ուղղականի կադապարի միասնական սկզբունքը, և վատ կլիներ դա «ուղղական» կադապարի օգտավետության համար, ուրեմն՝ օրյեկտիվ երեվույթները ճանաչելու գործում, խոսք ստեղծելու գործում ևս մնասակար կլիներ:

Բայց քերականները ստուգել են, թե կրող առարկան, իրոք, միշտ էլ ուղղական ձև ունի: Փոխարինում կատարելով՝ ստացել են հետևյալ պատկերը.

Կարապետը սիրում է ծաղիկ:

Կարապետը սիրում է մի ուսուցչի (մի—դնում ենք իբրև անորոշ հոգ): Երկրորդ առարկայական տնդամի, կրող առարկայի գրսևորման ձևը փոփոխեց, ուրեմն՝ նա լեզվի մեջ տարբերակված է ուղղական ձևից, ուրեմն՝ կրողի անունը կարող է լեզվի մեջ նաև «սեռական» ձև ունենալ: Բայց ահա առնվում է երրորդ օրինակը. Կարապետը սիրում է ուսուցչին: Այստեղ էլ երևում է, որ կրող խնդրի ձևը դավաճանեց նաև սեռական ձևին. կրող խնդիրը մեկ նմանվեց ուղղականին, մեկ նմանվեց սեռականին. մեկ էլ նմանվեց տրականին. նշանակությամբ տարբերվող այդ բառաձևերը տոանձին-առանձին վերցրած ձևով էլ տարբեր են. մեկը՝ սեռականից, մյուսը՝ տրականից, երրորդը՝ ուղղականից, այսինքն՝ իբևնց ամբողջության մեջ ինքնությունը գրսևորման յուրահատուկ եղանակ ունեն, ձևավորման ինքնությունություն ունեն, ուստի դա իր

ամբողջությամբ բերականները կադապարել են որպես մի առանձին հոլով՝ կո-
չելով, ինչպես նախորդները, իր նշանակության անունով — հայցական (կրողի)
հոլով: Բայց դա բոլորը չէ: Այդ հոլովը ցայտուն կերպով դրսևորում է հայե-
րենի մի կարևոր առանձնահատկություն, որն արհամարհելու իրավունք չու-
նենք: Այդ հոլովը և միայն այդ հոլովը իր ձևական յուրահատկու-
թյամբ դրսևորում է անձի և իրի առումը, մինչդեռ մյուս հոլովներն իրենց
ձևերով այդ չեն կարողանում դրսևորել: Վերջներ օրինակներ. Խողա-
կան մարդ, մարդը, բոշոմ, բոշոմը, ծաղիկ, ծաղիկը. այստեղ ոչնչով չեն
դրսևորված անձի և իրի առումները բացի սոսկ բառական իմաստներից: Սև-
ռական, մարդու, բոշոմի, ծաղկի. այստեղ ևս ոչնչով չեն դրսևորված անձի և
իրի առումները: Տրական, մարդու, մարդուն, թռչունի, թռչունին, ծաղկի,
ծաղկին. իրի և անձի առումները ոչնչով չեն դրսևորված նաև այստեղ: Բայց
սհա ռայցական, ծաղիկ, ծաղիկը, մարդ, մարդու, մարդուն, թռչուն, թռչունը
(անձնավորված՝ թռչունի, թռչունին): Այստեղ՝ հայցականում շատ որոշակի
դրսևորվում են անձի և իրի առումները, եթե միայն երկուսը վերցնում ենք
միասնաբար: Ուրեմն՝ հայցական հոլովը ոչ միայն իր ձևերի յուրահատկու-
թյամբ, ոչ միայն իր նշանակությամբ առբերվում է մյուս հոլովներից, այլ
նաև նրանով, որ նա դրսևորում է հայոց լեզվի մեջ անձի և իրի առումը, որ
արևելյան աշխարհագրի սպեցիֆիկան է: Հետևաբար հայցական հոլովը սո-
վորդի, քերականությանը մերձեցողի համար պետք է ունենա իր խնդիրուն
կադապարը, որպեսզի այդ հատվածում մեր լեզուն դառնա գիտակցության
դրսևորման, աշխարհաճանաչման և հաղորդակցության նրբագույն միջոցը բո-
լոր այն մարդկանց համար, որոնք հայերեն լեզուն, հայոց լեզվի քերականու-
թյունը սովորելու են: Ուրեմն՝ հայոց լեզուն ունի և սևռականը, և հայցականը,
որոնք մեր քերականության մեջ էլ պիտի մնան: Այս է մանկավարժական լեզ-
վաբանության եղրակացությունը:

Այժմ տեսնենք, թե ինչպես է դրությունը արդի ճեղքվորոպական մյուս լե-
զուններում: Հնդեվրոպական լեզուներն ապրել են երկու կարգի էվոլյուցիա.
նրանցից մի քանիսը հոլովների հարցում կոնսերվատիվ են, պահպանել են նա-
խալեզվի հոլովներից շատ ու քիչ քանակություն և այժմ էլ ձևաբանական լե-
զուներ են, ինչպես, օրինակ՝ հունարենը, հինգի լեզուն, հայերենը, ռուսերենը,
գերմաներենը և այլն: Մյուս մասը, ինչպես օրինակ՝ ֆրանսերենը, անգլերենը,
չեչել են հոլովները (անգլերենի սևռականը հաշվի չենք առնում): Պարզ է, որ
հայերենի համար վերջիններս ոչ մի օրինակ չեն կարող ծառայել, ոչ մի անա-
լոգիա հայերենը ֆրանսերենի և անգլերենի հետ չունի: Հայերենը պետք է
համեմատենք ժամանակակից ռուսերենի, հինգի լեզվի, գերմաներենի, հունա-
րենի և այլոց հետ: Հնդեվրոպական ժամանակակից ձևաբանական լեզուներից
ամենաշատ հոլովներ ունեն հինգին և հայերենը, գործանալիորեն նույն քա-
նակությամբ և նույն հոլովները: Ժամանակակից հինգի լեզվի հոլովներն են՝
բաղական, սևռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներ-
գոյական, կարծես նա հայերենին կրկնել է, կամ ընդհակառակն:

Մյուս բոլոր լեզուները կորցրել են մի քանի հոլովներ, բայց դարմանալին
այն է, որ նրանց կորցրած հոլովներն ուժեղ արտահայտված հոլովներ են,
այսինքն՝ բացառական, գործիական, ներգոյական:

Հինգին իր յոթ հոլովների շարքում պահպանել է ուղղական, սեռական, տրական, հայցական հոլովներն անվթար: Թուսերենը իր վեց հոլովների շարքում պահպանել է ուղղական, սեռական, տրական, հայցական հոլովներն անվթար: Հունարենը իր հինգ հոլովների շարքում պահպանել է ուղղական, սեռական, տրական, հայցական հոլովներն անվթար: Եվ, վերջապես, գերմաներենը իր չորս հոլովների շարքում պահպանել է նույն ուղղական, սեռական, տրական, հայցական չորս հոլովներն անվթար: Բայց դա մի բան նշանակում է: Առ, նշանակում է: Արդի հնդեվրոպական ձևաբանական լեզուների համար դա նշանակում է, որ լեզվական րմբրոնումների դիֆերենցման մեջ այդ չորս հոլովներն ամենամեծաժեշտ են, ուստի նրանք դրսևցից հրաժարվել չեն կարող: Հոլովները սովորաբար փոխարինվում են կապով և սեռական, տրական ու այլ հոլովներով: Այդ բանը հեշտությամբ կատարվել է բացառական, գործիական, ներգոյական հաստատուն համարված հոլովների հետ, բայց դժվարությամբ է կատարվում սեռական, տրական, հայցական հոլովների հետ: Ինչպես տեսնում ենք, այդ չորս հոլովները հնդեվրոպական ձևաբանական լեզուներում կոնսերվատիվ են, ավանդույթային, պահպանվում են, և դրանով պահպանվում են առարկայական և իրային հարաբերությունների դրսևորումները այդ լեզուների մեջ, որոնք և դառնում են հոլովների կադապարման էական հիմունքներ:

Ձևաբանական լեզուների մեջ ավելի ուժեղ են սեռականն ու հայցականը և, եթե չորս հոլովներից կորուստ է լինում, ապա կորչում է տրականն ավելի շուտ, քան սեռականն ու հայցականը: Այսպես, իսպաներենում բոլոր հոլովները կորել են, բայց պահպանվել է հայցականը, անգլերենում բոլոր հոլովները կորել են, բայց պահպանվել է սեռականը:

Իսկ հայերենում ևս պահպանված են հնդեվրոպական հոլովները, ըստ որում ներգոյականի համար կադմավորվել է նոր ձև հնդեվրոպական նյութից՝ հնդեվրոպական մի հոլովակադմիչի ներգոյական առումով: Հայցականի ձևը գրաբարի մեջ աստիճանաբար վերացավ, աշխարհաբարում, սակայն, այդ ձևը ստացավ նու գրեևորում: Անձի և իրի առումները, որ երևում են կրող խնդրի գործածության մեջ, ապահովվեցին հայցականի երկու տարբեր վեջավորությանով, որ առնվեց մեկը ուղղականից (իրի), մեկն է տրականից (անձի): Քիսավորն այն է, որ հայոց լեզվով խոսողների պահանջը իրը և անձը տարբերելու համար բավարարվեց հայցականի յուրահատկությամբ, ինչպես նշել է դեռ 1911 թ. Ա. Մեյլեն, ասելով.

Таким образом, совпадение именительного и винительного падежей создавало потребность различать оба падежа в названиях одушевленных предметов. Подобная потребность в некоторых языках индоевропейского происхождения, а именно, в испанском и современном армянском, привела к различению формы, выражающей прямое дополнение, у одушевленных и неодушевленных предметов⁴.

Այսպիսով, մեր հայոց լեզուն չորս հազար տարի, ինչ կերպարանք էլ որ ստացել է, պահպանել է սեռական ու հայցական հոլովական օրինաչափությունները մերթ ուժեղ, մերթ ավելի թույլ արտահայտված, դրսևորելով մերթ

⁴ А. Мейс, Общеславянский язык, էջ 325.

մի, մերթ ալ ձևով անշտ այնպես, ինչպես ձևարարությունը պահպանած հնդեվրոպական ալ լեզուներ:

Մեր քերականությունն էլ հավատարմորեն կադապարել է այդ հոլովները առանձին և ինքնուրույն, իսկ աշխարհարար լեզվի քերականությունը շուրջ հարյուր տարի է, որ ուսուցանում է դրանք մեր դպրոցներում: Մեր քերականությունների միջից ամբողջությամբ առած սեռականն ու հայցականը երբեք չեն հանվել: Վերջին հարյուր տարվա ընթացքում բազմաթիվ սերունդներ սովորել են հայոց լեզուն և յուրացրել: այն. այդ յուրացմանը նպաստել են նաև սեռական ու հայցական հոլովները: Քերականության սովետական համակարգի հոլովական կադապարները, որոնց մեջ եղել են սեռականն ու հայցականը, սովորել են տասնյակ, հարյուր հազար հայեր: Այդ ամենով մենք պարտական ենք մանկավարժական լեզվաբանությանը, որի ներկայացուցիչները լեզվի օրինաչափությունները մշակելիս ելակետ են ունեցել սովորողի շահը, դպրոցի շահը: Սահմանելով քերականության հաստատուն կադապարներ և ուսուցանելով դրանք, նրանք արմատավորել են ուսուցիչների և սովորող սերնդի մեջ լեզվի հաստատուն օրինաչափությունների բմբունումներ՝ միաժամանակ ցույց տալով դրանք ստեղծագործորեն կիրառելու եղանակները՝ պահպանելով և արմատավորելով մեր լեզուն մեր ժողովրդի լայն զանգվածների մեջ:

Սեռական և հայցական հոլովներից հրաժարվելու մենք ոչ մի առիթ ու հիմք չունենք:

О ПАДЕЖНЫХ ТРАДИЦИЯХ В АРМЯНСКОЙ ГРАММАТИКЕ

Академик АН Арм.ССР А. С. ГАРИБЯН

(Р е з ю м е)

В статье рассматривается вопрос о взаимоотношениях языка и сознания в аспекте марксистской установки этого вопроса. Грамматика рассматривается как система моделированных закономерностей языка: в этой связи прослеживается процесс складывания науки грамматики, определения ее закономерностей и моделирования грамматических категорий. Далее в статье показываются методы установления количества падежей древнеармянского языка в связи с усвоением греческого грамматического образца армянскими грамматистами. По мысли автора, грамматика армянского языка в нашу эпоху строится по типу древнеармянской грамматики с учетом особенностей современного языка. На основе фактов и языковых данных автор рассматривает семь падежей в современном армянском языке, исходя из учета единства формы и содержания. Поскольку два армянских падежа (родительный и винительный) используют формы других падежей, ряд лингвистов требует исключения их из числа падежей современного армянского языка. В статье приводится аргументация того, что в живом армянском языке осознаются родительный и винительный падежи. При этом указывается на факт использования для родительного падежа одной из двух форм дательного падежа, а винительный падеж использует формы именительного, родительного и да-

тельного падежей. Родительный падеж имеет окончания, сходные с дательным падежом, однако родительный падеж никогда не получает артикля определенности, тогда как дательный падеж употребляется с окончанием без и с артиклем определенности. В данном случае качество и отличие родительного и дательного падежей выражаются противопоставлением «наличие и отсутствие» артикля определенности.

Винительный падеж выражается нулевой формой именительного падежа, окончанием родительного падежа и формой дательного падежа с артиклем определенности. Таким образом, винительный падеж в одном случае сходен с именительным, в другом случае сходен с родительным и неопределенным дательным, а в третьем — с дательным с артиклем определенности. Автор в этом усматривает своеобразие оформления винительного падежа. Вместе с этими особенностями учитывается и кардинальное смысловое различие в значениях падежей (именительный — падеж действующего лица, родительный — падеж, выражающий принадлежность, дательный — падеж конечного объекта действия, винительный — падеж прямого дополнения). В статье подчеркивается, что если в выражениях падежных значений проявляется какое-либо различие или особенность, то выделение самостоятельного падежа является неизбежным для всех языков. В связи с этим показывается, что те индоевропейские языки, которые сохранили морфологический строй, сохранили без изменения и именительный, родительный, дательный и винительный падежи. Немецкий язык, утратив все другие падежи, неизбежно сохранил все эти четыре падежа. Отсюда вывод: вышеупомянутые падежи для индоевропейских языков являются характерными. Армянский язык путем различных комбинаций также сохранил эти падежи, вследствие чего автор считает неправомерным изгнание винительного и родительного падежей из армянского языка. Вопросы грамматических категорий рассматриваются с позиции *педагогической лингвистики*, которую автор считает особой областью лингвистической науки.